«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նոտարիատի մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 5-րդ մասից «ճզմիչ կնիքը» բառերը, ինչպես նաև նշված բառերից առաջ առկա «և» տառը, 17-րդ հոդվածի 8-րդ մասում առաջին անգամ հիշատակվող «ճզմիչ կնիքը» բառերից առաջ՝ «և» տառը, երկրորդ անգամ հիշատակվող նույն բառերից առաջ՝ «ու» տառը, ինչպես նաև 36.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում՝ «ճզմիչ կնիքը» բառերից հետո առկա ստորակետը հանել:

Հոդված 2. Օրենքի 36.1 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը «կնիքը» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«արձագանքման կոդը և հսկիչ համարը, որոնց միջոցով հնարավոր է ստուգել փաստաթղթի հսկությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից տրամադրվող պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական www.e-verify.am կայքում»:

Հոդված 3. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի 2-րդ նախադասության մեջ «եթե հետախուզման որոշում կայացրած անձից կամ մարմնից կամ արդարադատության նախարարությունից» բառերից հետո լրացնել «իսկ դիվանագիտական ծառայության մարմիններում նոտարական գործողությունները կատարելու դեպքում՝ հյուպատոսական էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերով:

Հոդված 4. Օրենքի 54-րդ հոդվածի վերնագրում 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները» բառերը փոխարինել «դիվանագիտական ծառայության մարմիններ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի «նրանց ղեկավարները» բառերը փոխարինել «հյուպատոսի և փոխհյուպատոսի պարտականությունները կատարող անձինք» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել արդարադատության նախարարի 07.09.2010 թվականի «Հայաստանի Հանրապետության նոտարների կողմից վավերացվող փաստաթղթերում ճզմիչ կնիքների օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 178-Ն հրամանը: